ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-85/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40472-15 և 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրություններով ներկայացված «Նայթեքս» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-85/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-85/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 22.11.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.11.2015թ. թիվ ԴՎԱ/2842 գրության հիման վրա, 16.12.2015թ. թիվ 1/73-1/40472-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «Նայթեքս» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «Նայթեքս» ԲԲԸ-ին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 22.02.2016թ. թիվ 01/04.1/581-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40472-15 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Նայթեքս» ԲԲԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (13.11.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Մասնակցի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Նայթեքս» ԲԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

ՀՀ ֆինանսների նախարարությունը, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ վկայակոչելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները, Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Նայթեքս» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«Նայթեքս» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 17.12.2015թ. թիվ 01/04.1/3777-16 գրությամբ դիմել է «Նայթեքս» ԲԲԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրության՝ Ընկերության կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

«Նայթեքս» ԲԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 18.11.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-85/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.11.2015թ. թիվ ԴՎԱ/2842 գրությամբ ներկայացրել է «ՇՀԱՊՁԲ-7/42-6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթեքս» ԲԲԸ-ի միջև 06.06.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/42-6» ծածկագրով պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 3.1.6 կետի «բ» ենթակետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծարել է Պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 18.11.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-85/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԳԲԽ-85/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 22.11.2016թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40472-15 և 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրություններով ներկայացված «Նայթեքս» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 05528419) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

5. **<u>ՍՑ-ԳԲԽ-85/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40472-15 և 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրություններով ներկայացված «Նայթեքս» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթեքս» ԲԲԸ-ի միջև 06.06.2013թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/42-6» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողը (տվյալ դեպքում՝ «Նայթեքս» ԲԲԸ-ն) պարտավորվում է Պայմանագրով և դրա անբաժանելի մասը հանդիսացող գնման ժամանակացույցով (Հավելված N2) սահմանված կարգով, նախատեսված քանակներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին՝ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությանը, հանձնել Պայմանագրի Տեխնիկական բնութագրով (Հավելված N2), նախատեսված տեսակի և որակի ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը պատավորվում է ընդունել այդ Ապրանքը և ճարել դրա համար:

3. Պայմանագրի 3.1 կետի 3.1.6 ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է Պայմանագիրը:

4. Պայմանագրի 3.1.6.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

5. Համաձայն Պայմանագրի թիվ 1 հավելված գնման ժամանակացույցի՝ գնման առարկայի մատակարարումը Ընկերության կողմից պետք է իրականացվեր հետևյալ կարգով. առաջին չափաբաժնի 1235 հատ կիսաբրդյա, ամենօրյա տաբատը՝ 2013թ. հունիս ամիս, 2-րդ չափաբաժնի 315 բամբակյա, ամառային կապույտ գույնի թռիչքային կոստյումը՝ 2013թ. հունիս ամիս, 3-րդ չափաբաժնի 3400 տանկիստի բամբակյա ամառային կոստյումից 1000 լրակազմը՝ 2013թ. հունիս ամիս, 1000 լրակազմը՝ 2013թ. հուլիս ամիս, 1000 լրակազմը՝ 2013թ. օգոստոս ամիս, 400 լրակազմը՝ սեպտեմբեր ամիս, 4-րդ չափաբաժնի 2500 արհեստական մորթե օձիքով տանկիստի ձմեռային կոստյումից 1000 լրակազմը՝ 2013 թ. հունիս ամիս, 1000 լրակազմը՝ 2013թ. հուլիս ամիս և 500 լրակազմը՝ 2013թ. օգոստոս ամիս:

6. Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 10.09.2013թ. թիվ ԴՎԱ/2659 գրությամբ հայտնել է, որ 06.09.2013թ. դրությամբ Ընկերությունը գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներից պակաս է մատակարարել կիսաբրդյա ամենօրյա 1235 հատ տաբատ, ամառային բամբակյա կապույտ գույնի 315 լ-կ թռիչքային կոստյում, ամառային բամբակյա 3000 լ-կ տանկիստի կոստյում, արհեստական մորթե օձիքով ձմեռային 2500 լ-կ տանկիստի կոստյում:

Նշված գրությամբ Պատվիրատուն հայտնել է Ընկերությանը, որ անհրաժեշտ է կարգավորել Պայմանագրին կից ժամանակացույցով նախատեսված մատակարարումների ընթացքը մինչև 30.09.2013թ., հակառակ դեպքում Պայմանագիրը Պատվիրատուի կողմից կլուծարվի:

7. Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 06.12.2013թ. թիվ ԴՎԱ/3559 գրությամբ հայտնել է, որ 05.12.2013թ. դրությամբ Ընկերությունը պակաս է մատակարարել Պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներից կիսաբրդյա

ամենօրյա 1235 հատ տաբատ, ամառային բամբակյա կապույտ գույնի 315 լ-կ թռիչքային կոստյում, ամառային բամբակյա 2180 լ-կ տանկիստի կոստյում, արհեստական մորթե օձիքով ձմեռային 2500 լ-կ տանկիստի կոստյում:

Նշված գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը հայտնել է նաև, որ թերի մատակարարված նշված ապրանքները անհրաժեշտ է մատակարարել մինչև 20.12.2013թ., հակառակ դեպքում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն կլուծարվի:

8. Համաձայն Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման 06.11.2015թ. զեկուցագրի՝ Ընկերությունը 28.10.2015թ. դրությամբ պակաս է մատակարարել կիսաբրդյա ամենօրյա 1235 հատ տաբատ, ամառային բամբակյա կապույտ գույնի 315 լ-կ թռիչքային կոստյում, 481 հատ տանկիստի ձմեռային կոստյում:

9. Պատվիրատուն 17.11.2015թ. թիվ ԴՎԱ/2746 գրությամբ ծանուցել է «Նայթեքս» ԲԲԸ-ին՝ հայտնելով որ, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.6 կետի «բ» ենթակետը ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.11.2015թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

10. Կենտրոնը 22.02.2016թ. թիվ 01/04.1/581-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40472-15 գրության հիման վրա, արձանագրել է «Նայթեքս» ԲԲԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

11. ՀՀ ֆինանսների նախարարությունը, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ վկայակոչելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները, Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Նայթեքս» ԲԲԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40472-15, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16, ՀՀ պաշտպանության նախարարության 26.11.2015թ. թիվ ԴՎԱ/2842 գրությունները և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝ ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ***որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

«Նայթեքս» ԲԲԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 06.06.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/42-6» ծածկագրով ապրանքի գնման պայմանագրի թիվ 1 հավելված գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկայի մատակարարումը Ընկերության կողմից պետք է իրականացվեր հետևյալ կարգով. առաջին չափաբաժնի 1235 հատ ամենօրյա կիսաբրդյա տաբատը՝ 2013թ. հունիս ամիս, 2-րդ չափաբաժնի 315 բամբակյա, ամառային կապույտ գույնի թռիչքային կոստյումը՝ 2013թ. հունիս ամիս, 3-րդ չափաբաժնի 3400 տանկիստի ամառային բամբակյա կոստյումից 1000 լրակազմը՝ 2013թ. հունիս ամիս, 1000 լրակազմը՝ 2013թ. հուլիս ամիս, 1000 լրակազմը՝ 2013թ. օգոստոս ամիս, 400 լրակազմը՝ սեպտեմբեր ամիս, 4-րդ չափաբաժնի 2500 արհեստական մորթե օձիքով տանկիստի ձմեռային կոստյումից 1000 լրակազմը՝ 2013 թ. հունիս ամիս, 1000 լրակազմը՝ 2013թ. հուլիս ամիս և 500 լրակազմը՝ 2013թ. օգոստոս ամիս:

Պատվիրատուն Ընկերությանը 10.09.2013թ. թիվ ԴՎԱ/2659 գրությամբ հայտնել է, որ 06.09.2013թ. դրությամբ Ընկերությունը Պայմանագրով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներից պակաս է մատակարարել կիսաբրդյա ամենօրյա 1235 հատ տաբատ, ամառային բամբակյա կապույտ գույնի 315 լ-կ թռիչքային կոստյում, ամառային բամբակյա 3000 լ-կ տանկիստի կոստյում, արհեստական մորթե օձիքով ձմեռային 2500 լ-կ տանկիստի կոստյում:

Նշված գրությամբ Պատվիրատուն նախազգուշացրել է Ընկերությանը Ապրանքը թերի մատակարարելու վերաբերյալ և հայտնել, որ մատակարարումների ընթացքը անհրաժեշտ է կարգավորել մինչև 30.09.2013թ., հակառակ դեպքում Պատվիրատուն միակողմանի կլուծարի Պայմանագիրը:

Պատվիրատուն 06.12.2013թ. թիվ ԴՎԱ/3559 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ 05.12.2013թ. դրությամբ Ընկերությունը պակաս է մատակարարել Պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներից՝ կիսաբրդյա ամենօրյա 1235 հատ տաբատ, ամառային բամբակյա կապույտ գույնի 315 լ-կ թռիչքային կոստյում, ամառային բամբակյա 2180 լ-կ տանկիստի կոստյում, արհեստական մորթե օձիքով ձմեռային 2500 լ-կ տանկիստի կոստյում:

Պատվիրատուն նշված գրությամբ Ընկերությանը հայտնել է նաև, որ թերի մատակարարված նշված ապրանքները անհրաժեշտ է մատակարարել մինչև 20.12.2013թ., հակառակ դեպքում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն կլուծարվի:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման 06.11.2015թ. զեկուցագրի համաձայն՝ Ընկերությունը 28.10.2015թ. դրությամբ պակաս է մատակարարել կիսաբրդյա ամենօրյա 1235 հատ տաբատ, ամառային բամբակյա կապույտ գույնի 315 լ-կ թռիչքային կոստյում, 481 հատ տանկիստի ձմեռային կոստյում:

Պատվիրատուն 17.11.2015թ. թիվ ԴՎԱ/2746 գրությամբ ծանուցել է «Նայթեքս» ԲԲԸ-ին, հայտնելով որ, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.6 կետի «բ» ենթակետը ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.11.2015թ. միակողմանի լուծում է պայմանագիրը:

Այսպես, Պայմանագրի 3.1 կետի 3.1.6 ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Նույն Պայմանագրի 3.1.6.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից էականորեն խախտվել է Պայմանագիրը, քանի որ վերջինս բազմիցս խախտել է Ապրանքի մատակարարման ժամկետները:

Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ավելի քան մեկ անգամ պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծարման:

Միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u>** ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Խորհուրդն արձանագրում է, որ «Նայթեքս» ԲԲԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը:***

Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ Խորհրդի կողմից սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ՝ Խորհուրդը ***չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (13.11.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:*** Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40472-15 և 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրություններով ներկայացված «Նայթեքս» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 05528419) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Հովհաննիսյան Արմենակ**

Բաղալյան Սյունե